

ԹԻԻ 5

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1913-14 ՇՐՋԱՆԻ
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ Ե.

7 Յունիս 1913



Յաղագրութիւն Ռ. ՍԱԳՆԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏ, Գուրշուկու Խան, Թիւ 7, Կ. ՊՕԼԻՍ

1913

(Ատենադպիր էֆէնտի կարդաց հետեւեալ
գիրը :)



Ազնուաշուք Ատենապետ էֆէնտի

Ազգ. Պատկառելի Ժողովոյ,

Այսօր թէև Վարչութեան խառն Ժողովոյ նիստին ներկայ գտնուեցայ, բայց գլխացաւս սաստկանալով յակամայից ստիպուեցայ մեկնել ի տուն. իմ այս ակամայ զանցառութեանս ժողովոյդ ներողամատութիւնը խնդրելով կը յանձնեմ նախագահութիւնը երիցագոյն եկեղեցականի մը որ պիտի գտնուի Ժողովոյդ մէջ:

Մնամ ազօթարար

Պ. Հ. Թ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԲԵՊ ԱՐՇԱՐՈՒՆԻ

1913 Յունիս, 7

ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱԻԵՐԱՑՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեծատուրեան էֆ. գրով մը իր բացակայութիւնը կը յայտնէ. կ'արձանագրենք օրինաւոր բացակայ. Վարչութիւնը զրկած է Եօզկատի երեսփոխանական ընտրութեան տեղեկագիրը:

(Ատենադպիր էֆէնտի կարդաց հետեւեալ գիրը):

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի

Ազգային Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Եօզկատի Գաւառական Ընդհանուր Ժողովոյ կողմէ՝ երկրորդ վիճակաւ զառարեալ Երեսփոխանին տեղ. ըստ հրահանգի Պատրիարքարանիս նոր ընտրութիւն կատարուած եւ Ապրիլ 7 թուականաւ տեղեկագրով ներկայացուած է արդիւնքը, յորմէ կը տեսնուի թէ Աւետիս Էֆէնտի ձեռնարկեալ Ազգային Երեսփոխան ընտրուած է՝ զուէնքու բացարձակ առաւելութեամբ:

Ազգային Կեդր. Վարչութեան Քաղաքական Ժողովը՝ Սահմանադրութեան 81րդ յօդ-

ուածին համաձայն ստուգելով նորընտիր Երեսփոխանին ընտրելութեան պայմաններն, ըստ ամենայնի համաձայն գտաւ Սահմանադրութեան տրամադրութեանց: Հետեւաբար, ընդ գրոյս պատկառելի Ժողովիդ կը մատուցանէ ընտրական տեղեկագիրն:

Մնամք Յարգանք

Ի դիմաց Քաղաքական Ժողովոյ

Դեր Ատենադպիր

Ատենապետ

Ա. Յ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Ս. ԳԱՐԱԵԱՆ

(Ատենապետ էֆ. սոյն ընտրութիւնը քըւէի դնելով Եօզկատէ երեսփոխան հռչակեց Աւետիս էֆ. ձեռնարկեալը):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բողոքագիր մը կայ Սկիւտարէն տեղւոյն երեսփոխանական ընտրութեան մասին:

Վ.Ս. ԹԵՔԵՆԱՆ ԷՖ. — Այդ մասին քաղաքական Ժողովէն տեղեկագիր եկած է: Քանի որ չէ եկած, կը վերապահենք այդ բողոքագիրը:

ՀՄ. ԱՐԱՄԵԱՆՑ ԷՖ. — Ատիկա բողոքագիր մըն է նոյն ինքն Քաղաքական Ժողովին դէմ:

Վ. ԹԵՔԵՆԱՆ ԷՖ. — Քանի որ այդ ընտրութեան տեղեկագիրը չէ եկած, բողոքն ալ կը պահուի մինչև որ այդ տեղեկագիրը գայ: Թերեւս Վարչութիւնը չի վաւերացներ:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Վարչութիւնը կը քննէ խնդիրը, կրնաք յղել մեզի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն կը յղենք Վարչութեան:

Վ. ԹԵՔԵՆԱՆ ԷՖ. — Զիշտ չէ. արդէն անոր բողոքողները յղած կ'ըլլան, ատիկա հոս պէտք է պահենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն հոս կը պահենք:

ՎԱՐԴԳԷՍ ԷՖ. — Սխալ է. գործին դիւրութեան համար պէտք է Վարչութեան յղել:

Ա. ԱԼՊՈՅԱՆ ԷՖ. — Պատճէր արդէն տրուած է անոր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեր ատենադրութեան մէջ կը տպագրուի, Քաղաքական Ժողովը կը տեսնէ. ատիկա կը պահենք մեզի:

ՄԻԱՑԵԱԼ ԹԱՂԵՐՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ պիտի կարդացուի վարչութեան ուրիշ մէկ գիրը, Գնալիի և Գումգարուի դրսի թաղերու երեսփոխանական ընտրութեան մասին:

(Ատենադպիր էֆէնտի կարդաց հետեւեալ գիրը):

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի

Ազգային Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Ինչպէս յայտնի է, ժամանակին կատարուած երեսփոխանական բաշխման մը համաձայն Գարթալ-Գնալի կղզիի, Ինչպէս նաեւ Գումգարու և Գումգարուի դրսի միացեալ թաղերը կը պարտաւորին միասին կատարել իրենց երեսփոխանական ընտրութիւնները:

Բայց վերջին աւագամ սոյն միացեալ կղզիին թաղերու մէջ կատարելի երեսփոխանական ընտրութեանց առթիւ Գնալիի և Գումգարուի դրսի թաղական խորհուրդներէն առաջինը չուղեր միանալ Գարթալի և երկրորդը Մայր Եկեղեցւոյ թաղական խորհուրդներուն հետ պահանջելով ունենալ իրենց ուրոյն և

ընտրութեան ընդհանուր Ժողովոյ մէջ եւ ըստ այնմ առանձին կատարել իրենց ընտրութիւնները: Թէպէտեւ Քաղաքական Ժողովոյ կողմէ քանիցս գրուեցաւ նոյն թաղական խորհուրդի թէ ժամանակին կատարուած երեսփոխանական բաշխմամբ տրամադրելի աթոռ չը գտնուի, և թէ հինգ երկտարեկան ընդհանուր վիճակարկութեան մէկ անգամէն կատարուած ըլլալուն բերմամբ և խառն Ժողովոյ որոշմամբ հարկ դատուած է առ այժմ երեսփոխանական նոր բաշխում չկատարել, անհնարին է գոհացում տալ իրենց փափաքան, հրաւէր ուղղուեցաւ նոյն թաղական խորհուրդներուն որ ըստ առաջնոյն միացեալ կերպով կատարեն յանձնարարեալ ընտրութիւնը: Այլ սակայն թէ Գնալի կղզիի եւ թէ Գումգարուի դրսի թաղական խորհուրդներն Գումգարուի դրսի թաղական խորհուրդներէն միասին առաջինը Գարթալի և երկրորդը Մայր-Եկեղեցւոյ հետ, որով կարելի չեղաւ ցարդ կատարել տալ նոյն թաղերէն պակասեալ երեսփոխանաց ընտրութիւններն:

Նկատելով որ Գնալիի թաղ. խորհուրդը նոյն առարկութեան վրայ Գարթալի թաղ. խորհուրդը արտօնուած էր երկու տարի առաջ առանձին կատարել ընտրութիւնը և Պատկ. Ժողովը վաւերացուցած է ժամանակին այս եղանակաւ կատարուած երեսփ. ընտրութիւնը, և նկատելով որ Գումգարուի դրսի թաղ. խորհուրդն ալ միեւնոյն դիրքին մէջ կը գտնուի այսօր, Քաղաք. Ժողովը պարտ կը համարի այս վիճակը ներկայացնել Պատկ. Ժողովիդ որպէս զի հաճի տալ այս մասին հարկ եղած որոշումն ու հրահանգը, ըստ այնմ պէտք եղած որոշուած համար նոյն թաղերէն երեսփոխանական ընտրութեանց մասին:

Մնամք Յարգանք

Ի դիմաց Քաղաքական Ժողովոյ

Դեր Ատենադպիր

Ատենապետ

Ա. Յ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Ս. ԳԱՐԱԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը ինչ ունի ըսելիք: Յղենք իրաւասութեան Դիւանին:

ՎԱՐԴԴԵՍ ԷՖ. — Սովորութեան պէտք է հետեւին առ այժմ, քանի որ երեսփոխաններու ընդհանուր թիւը ճշդութեամբ է. ինչ կ'ուզէին, գաւառէն մէկ երեսփոխան ալ կրճատենք և մայրաքաղաքին վրայ աւելցընենք: Ս. Յարութիւն թաղին կարելի է գոհացում տալ Մայր Եկեղեցիի երեսփոխաններէն մէկը առանձին անոր տալով: Իսկ Գրնալըն և Գարթալը միասին մէկ երեսփոխան ունենալնուն, չենք կրնար կիսել:

Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ ԷՖ. — Թաղական Խորհուրդները անսաստած են. Բաղաքական Ժողովը պէտք էր պատժեր, խնդիրը հոս բերելու չէ: Այդ թաղական խորհուրդները պարտաւոր էին համակերպիլ սղգային իշխանութեանց:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Այդ չէ խնդիրը: Անոնք իրաւունք կը պահանջեն երեսփոխանական ընտրութիւնը անջատարար կատարելու: Բնականաբար ձեզմէ արտօնութիւն պէտք է խնդրէինք՝ այդ իրաւունքը տալու համար:

Վ. ԹԵՔԵՆԱՆ ԷՖ. — Վտանգաւոր նախընթաց մըն է ատիկա: Ասկէ առաջ այդ զոյգ թաղերը միշտ միացեալ կատարած են: Վարչութիւնը վերջին անգամ պէտք է ազդարարէ և պահանջէ այդ թաղերէն որ իր յարմար տեսած ձեւով ընտրութիւններն կատարեն. եթէ չմիանան, այն ատեն, ինչպէս անցեալ անգամ եղաւ, օրինակ՝ Գարթալը առանձին կը կատարէ:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Բայց այն ատեն Ս. Յարութիւն և Գրնալը թաղերը կը զերկուին իրենց ընտրական իրաւունքէն:

Վ. ԹԵՔԵՆԱՆ ԷՖ. — Ճիշտ է:

Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ ԷՖ. — Ազդարարել

բաւական չէ, պատիժ ալ պէտք է, այդ Թաղական Խորհուրդներուն, իրենց ըմբոստացման համար:

Մ. ՀԱՅԱՍՏ ԷՖ. — Գնալըի թաղական Խորհուրդը իրաւունք չունի այդպիսի բռնատնտեսութեամբ մը զրկել իր ժողովուրդը ընտրութեան իրաւունքէն, անցեալ անգամներուն ալ այդպէս ըրած են. և տարիներէ ի վեր Գնալը ընտրութեան իրաւունքէ զրկուած կը մնայ:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Սահմանադրական սկզբունքները այդպէս չեն թելադրեր: Թաղական Խորհուրդները ժողովուրդէն ընտրուած են, կը պատժես, կը լուծես, ժողովուրդը նորէն նոյնը կրնայ ընտրել: Այդ խնդիրը պէտք է լուծել: Չեն ուզեր միանալ. ինչո՞ւ, թաղականները ժողովուրդին ներկայացուցիչներն են երբ լուծենք, նոյն անձերը կ'ընտրեն: Ահա կը գտնուինք ճիշտ նոյն կեփասին մէջ, որու վրայ կասկած յայտնեցի, ես էի որ պնդեցի թէ երկու տարի մէկ անգամ պէտք է վիճակ քաշուի փոխանակ 10 տարիի, որպէսզի այդ անիրաւութիւնները դարմանուին. և օրինակ՝ ինչո՞ւ էյուպը երեսփոխան մը տայ և Գնալը չի տայ: Ես ըսի, մտիկ չըրիք, 10 տարուանը մէկանց ըրիք և այժմ կեփասի մէջ ինկանք:

ՎԱՐԴԴԵՍ ԷՖ. — Լաւ. բայց այն ատեն նոր բաշխում մը պէտք է ընել, գաւառներու և Պոլիսի համար, ատիկա ալ սահմանադրութեան վերաքննութեան կը վերաբերի նախնական էֆ. ազմուկ կը հանէ որովհետեւ իր առաջարկին մէջ պարտուեցաւ և մեծա մասնութեամբ որոշուեցաւ 10 տարուան վիճակը միասին քաշել: Այսպէս ինչպէս կարծիքին ալ հակառակ եմ, մենք իրաւունք չունինք Թաղական Խորհուրդը լուծելու. անոնք իրենց ժողովուրդէն ընտրած են: Բաղաքական Ժողովը վերջին անգամ պէտք է ազդարարէ որ ընտրութիւնը միասին կատարեն, հակառակ պարագային՝ կը զրկուին, և Գարթալ ու Մայր Եկեղեցի կը կատարեն ընտրութիւններն, առանց սպասելու:

Մ. ՀԱՅԱՍՏ, ԷՖ. — Ես սխալ կը նկատ

տեմ վարդգէս էֆ. տեսակէտը: Ո եւ է թաղական խորհուրդը իրաւունք չունի իր ընթացքով իր ժողովուրդը զրկել ընտրական իրաւունքէ. ան կրնայ տարբեր նկատումներ ունենալ, բայց ինչու զրկենք ժողովուրդը, օրինակ Գարթալ կրնայ առանձին ընտրութիւն կատարել Գնալըն ալ առանձին, յետոյ քուէները կը միացուին և առաւելագոյն քուէ չահողը երեսփոխան կը հռչակուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վիճաբանութիւնը բաւական է, Դրկենք վարչութեան որ գործադրէ օրէնքը:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Իսկ եթէ չգործադրեն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեր զիտնալիք բանն է, ինչպէս յարմար կը տեսնէք՝ կը կարգադրէք:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՄԵՐՍԵՆՈՒԹԻՒՆԸ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիր մը կայ Հայկազն էֆ.էն, Եգիպտոսի մէջ կատարուած կուսակցական համերաշխութեան մասին:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը):

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի
Ազգային Երեսփ. Պատկ. Ժողովոյ

Այն բերկրաւոր պարագան՝ որով մեր Եգիպտոսական եղբայրները համերաշխած են անշուշտ մեծ ուրախութեամբ համակած է բոլոր հայութիւնը, Այն ժեսսը որ բոլոր կուսակցութիւնները ունեցան իրարու հանդէպ ամէն գովաստէ վեր է և ամէն պատուի արժանի, Ուստի մաղթելով որ ողջոյն Հայութիւնը առանց բացառութեան նոյն ոգով վերաբերուի իրարու հանդէպ, կ'առաջարկեմ

Պատկ. Ժողովիդ գնահատումը և գոհունակութիւնը յայտնել և Ս Պատրիարք հօր օրհնութիւնները ձօնել Եգիպտոսայ պատուական գաղութին՝ և համերաշխական սիրալի գործին նախաձեռնարկ եղողներուն:

913 Յունիս 7/20 Ազգ. Երեսփոխան
ՄԻՀՐԻԱՏ ՀԱՅԱՍՏ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վստահ եմ որ թէ բոլոր ազգային երեսփոխանները անխտիր և հաւաքէն ամբողջ ուրախ են որ այդպիսի համերաշխութիւն մը գոյացած է հայ քաղաքական կուսակցութեանց միջև: Ատիկա լաւ օրինակ մըն է, որուն պէտք է հետեւին ամէն տեղ, մասնաւոր այս ճգնաժամի օրերուն բոլոր հայ կուսակցութիւնները պէտք է համերաշխին: Ս. Պատրիարքի բացակայութեան պատճառով, կը խնդրենք երիշագոյն անդամ Օրմանեան Սրբազանէն որ, իբր ժողովիս նախագահ օրնէ այդ համերաշխութիւնը:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՀԱՅՐ. — Աստուած օրհնէ Եգիպտոսայերը և ուր որ կը գտնուին անոնց նմանողները:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական գործողութիւնը աւարտած են, միայն մէկ երեսփոխան կը պակսի օրինական մեծամասնութեան համար, 10 վայրկեան դադար տանք, մեծա մասնութիւն գոյանալէ յետոյ օրակարգի կ'անցնինք: (10 վայրկեան դադար):

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ա.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրինական մեծամասնութիւնը գտած ենք, օրակարգի առաջին խնդիրն է Պատրիարքարանի վերաշինութեան հարցը: Երկար ատենէ ի վեր մնաց այս գործը, Պատրիարքարանն ալ չի ստեղծու. լինցաւ. կը յուսամ որ այսօր վերջ կը գտնէ անիկայ. կը հրաւիրեմ վարչութիւնը որ բացատրութիւններ տայ:

ՏՕԲԹ. Կ. ՓԱՇԱՆԵԱՆ ԷՖ. (Վարչութեան կողմէ). — Պատրիարքարանի վերադի նութիւնը, օրինաւոր թէ ապօրինաւոր միջոցներով վերջ գտած է արդէն նախորդ Վարչութեան օրով ձեռնարկուած է այն և մեզի իբր ժառանգ մնացած: Յարուածիւն էՖ. Շահրիկեանի հարցումը այդ մասին կարելի է ամփոփել երեք մասերու մէջ:

Ա. — 1911—12ի պիւտճէն չէ ներկայացուած, Վարչութիւնս ստուգեց թէ՛ 1912ինը ներկայացուած է, որով նիւթապէս անկարելի էր Պատրիարքարանի վերաշինութեան պիւտճէն գետեղել մէկ քանի ամիս յետոյ ներկայացուելիք 1913ի պիւտճէին մէջ:

Բ. — Հարցուած էր թէ Բանկալթիի 15000 ոսկին՝ երբ կառավարութիւնէն գանձուեցաւ, անոր բաշխման մէջ ինչո՞ւ ժողովիս հաւանութիւնը չէ առնուած, թէ Վարչութիւնը պարտաւոր էր այդպէս ընել. մեր նախորդը չէ նախատեսած այդ անհրաժեշտութիւնը, իսկ ներկայ Վարչութիւնը չէ ընդունած որ այդ դրամը այնպիսի գումար մը լլար որ պիւտճէի մէջ չմտնէ. ուստի դրամ է պիւտճէին մէջ:

Գ. — Հարցուած էր թէ ինչո՞ւ Պատրիարքարանի վերաշինութեան համար նախապէս ժողովիս հաւանութիւնը չէ առնուած: Ներկայ Վարչութիւնս համարում չէ եղած այդ մասին ալ իր նախորդին, ժողովիս հաւանութիւնը ստանալէ յետոյ միայն պէտք է ձեռնարկուէր գործի. իսկ նախորդ Վարչութիւնը ոչ միայն առանց հաւանութեան, այլեւ առանց որոշ ծրագրի, առանց նախահաշուի, նոյնիսկ առանց ճարտարապետական «փորձէի» ձեռնարկած է գործի, 6000 ոսկի ծախք ըրած է, պակասած էր 3000 ոսկի, որ կալուածող հոգարարներէն կեդրոնականի շինութեան համար յատկացուած դրամէն փոխ տրուած է. թէ ինչո՞ւ: Երբ մինք ձեռնարկեցինք մեր պաշտօնին, շինութեան յանձնարարութիւնը եկաւ և յայտնեց թէ դրամը կը պակսի և խնդրեց որ գումար մը տրամադրուի: Վարչութիւնս կատարուած իրողութեան մը առջև կը գտնուէր և չէնք կարելի չէր աւարտել, և որովհետեւ

Բանկալթիի դրամէն 3000 ոսկի տրամադրելի կար, և որովհետեւ այդ գումարը չէր բաւեր կեդրոնականը շինելու, ուրիշ դրամ ալ պէտք էր, մտածեցինք որ՝ մինչև ուրիշ դրամի գտնուելը կարելի էր փոխ առնել այդ գումարէն. հետեւաբար՝ 1400 ոսկի անկէ փոխ առինք և տրամադրեցինք պատրիարքարանի շինութեան: Բայց նախ քան այդ պահանջեցինք և անձամբ հետաժողով եղանք որ մասնաւոր նախահաշիւ մը կազմուի, և տեսանք ըստ պէտք է մօտ 1207 ոսկի որմէ՛ 300 ոսկի ներկի, 200 ոսկի կահաւորման և այլն. մինչև աւարտելը ուրեմն 4400 ոսկի պէտք կայ: Այս գումարը փոխառութեան ձեւով հոգացինք, իսկ այդ գումարին բաշխման մանրամասնութիւնը պիտի գտնէք մեր պիւտճէին մէջ:

Գ. ԱՍԼԱՆԵԱՆ ԷՖ. — Իբրև նախորդ Վարչութեան անդամ, բազմը ունեցած էի նաև Պատրիարքարանի վերաշինութեան նախաձեռնարկը ըլլալու՝ նախորդ Վարչութեան որոշումով: Դժբաղդաբար ներկայ Վարչութիւնը իր նախորդը քննադատելու կ'իլլէ, եթէ ժողովս կ'ուզէ լսել, պատրաստ եմ տեղեկութիւններ տալու երկարօրէն, և այլ եւ այլ խնդիրներ երեւան բերելու: — Ամէն ոք տեսած է Պատրիարքարանի հին շէնքը թէ՛ ինչ խարխուլ և փլելու վիճակի մէջ էր, մեր ազգին արժանապատուութեան համար վայելուչ և պատշաճ վիճակի մէջ չէր. աւելի ախտի կը նմանէր, ամէն առթիւ երբ հոն օտարական մը, դեսպան մը կ'այցելէր, կ'ամրջնայինք: Եւ կը զարմանամ որ տակաւին կան այնպիսիներ որ կը կարծեն թէ կրնայինք պահպանել այդպիսի շէնք մը: Մենք որ ամէն գործի մէջ կորով ցոյց կուտանք, ամօթալի բան մը չէ՞ր միթէ որ այդպէս թողնէինք այդ շէնքը: Ուրեմն նորոգելու ձեռնարկեցինք՝ երբ տեսանք թէ միջոց կար. աւելի իմ առաջարկութեամբս եղաւ ատիկա և իմ պաշտօնակիցներս ընդունեցին: Ինչ պատահեցաւ սակայն, գերեզմանատան խնդիրը կար. գիտէք թէ ինչ դժուարութիւններ քաշեցինք մինչև 15 հազար ոսկի գանձեցինք, ազգային ցոյց և Թուլէաթ պէյի բարեացակամութիւնը եթէ չլլար և եթէ նոյն օրը Պատրիարքարան չիգար...

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. (Ընդմիջելով). — Անուններ տալ հարկ չկայ. թէ ոչ Հալաճեան էՖ. ալ աշխատեցաւ:

Գ. ԱՍԼԱՆԵԱՆ ԷՖ. (Շարունակելով). — Պաշտօնական անձի անուն կուտամ. Մենք չենք որ ըրինք, ազգը ըրաւ. բայց վերջապէս յաջողեցանք: Անշուշտ մեր առաջին պարտքն էր ազգ. կալուածներու վերաշինութիւնը և հարկ էր որ կալուածող Հոգարարութիւնը իր եկամուտներէն չզրկուէր: Ուստի 9000 ոսկի տրամադրեցինք անոր. բայց կալուածները մինչև ցարդ չիտուած չեն, եթէ ես կըլամ ըլլայի, այդ գործն ալ կ'ընէի: Ասկէ մնաց 6000, Պատրիարքարանի վիճակը նկատի առինք, ես առաջարկեցի. ընկերներս ընդունեցին: Ներկայ Վարչութիւնը կ'ըսէ նախագիծ չկար. կը ներեմ իրեն այդ մեղադրանքներուն համար: Մենք ամենէն քիչ մեղադրանքնք ատոր մէջ. Թաղապետութիւնը նախ կարգադրած էր որ փողոցը ինչ միջոց լայնութիւն պիտի ունենայ և երբ այդ հաշուով թիւն պիտի ունենայ և երբ այդ հաշուով միջոց պիտի ըլլայ, վերջը երբ հին շէնքը փլաւ և հիմը դնելու սկսանք, նորէն 15 միջոց պիտի ըլլայ ըսին: Եւ ատորք զձեռն ուրուագծին վրայ 3—400 ոսկիի աւելի ծախք մը, չլաւ մը պատճառեցին, ստիպուեցանք մը, չլաւ մը պատճառեցին, ստիպուեցանք չինաճնիս քակել: Ահա թէ ինչո՞ւ 3000 ոսկիի փոխարէն աւելի ծախք գնաց: Եւ յետոյ Պատրիարք Սրբազանը այցելեց յաճախ գանազան պակասներ մատնանչեց, գանազան յաւելուածներու փափաքներ յայտնեց. ես ալ իբր ատենապետ կատարեցի Ազգին Պատրիարքին փափաքները. օրինակ սանդուխները դրան զարդերը են. փոփոխել տուաւ, թէ եւ դժուար էր. բայց ընդունեցի և անա նոր ծախք մը և անոր համար նախագծուած գումարը անցաւ: Ուրիշ դժուարութիւններ ալ մարը անցաւ: Ուրիշ դժուարութիւններ ալ պատահեցան: Պատերազմը սկսաւ. ամէն բան սղեց. գործաւորն ալ սղեց. պահանջուեցաւ որ հայ գործաւորներ բռնեինք, հիւան որմնաշին ամէնքն ալ հայ վարպետներ գտնել դժուար էր. անոր համար մեծ չլաւ կրեցինք: Հայերը օկար դուրս եկան երբ փոխանակ օտարի Հայերու տունք այդ գործը,

անոր համար նախագիծէն չեղեցանք: Ով որ ճարտարապետ է կը հասկնայ. փուլ մը իսկ աւելորդ ծախք չէ եղած. և ազգին արժանաւայել չէնք մը շինած ենք: Երբ օտար մը գայ չենք ամենայն պիւտճէ: Ուրիշ խնդիրներ ալ դեռ կան. շատեր, Պատրիարքարանի տեղին համար տարբեր գնահատումներ ունին, կը փափաքին ոչ թէ Գում-գարու տեսնել զայն, այլ ոմանք Բերա, ուրիշներ Գատը-գիւղ. ոմանք Սկիւտարի բարձունքը, ուրիշներ կըրհան փափաքել մինչև իսկ կամուրջին վրայ կամ Վալաթիոյ աշտարակին գլուխը տեսնել զայն: Ատորք չէին գիտեր թէ՛ 4—5000 ոսկիով այդպիսի տեղափոխութիւն մը չէր ըլլար. շատ դիւրին բան չէ. նախ հոն պնտրատ գետին մը ունէինք. յետոյ՝ կառավարութիւնը դիւրութեամբ արտօնութիւն տուաւ, որովհետեւ հոն Գում-գարուի մէջ կը ճանչնայ Պատրիարքարանը, ամէն մարդ ալ հոն գիտէ և անկարելի էր ուրիշ ձեւ ընել: Դժուարութիւններ շատ եղած են. ոմանք կարճ կը կտրեն, ոմանք երկար. առանց գիտնալու՝ ամէնքնիս ալ բժիշկ կը կտրենք: 46 միջոց երկայն, երկու կողմը բաց, ճակատը 35 միջոց, 15 միջոց փողոց, 13 միջոց երկայնք և 15 միջոց լայնք, այս չափով ո՞վ է այն ճարտարապետ որ ձեւի մը վերածէ այսպիսի տեղ մը, եթէ բունիսկ ճարտարապետ ըլլայ և ոչ թէ խօսող:

Վ. ՓԱՓԱՋԻԱՆ ԷՖ. (Ընդմիջելով). — Ասլանեան էՖ. բուն հարցումին չէ որ կը պատասխանէ, կը շեղի բուն խնդրէն հարցումը այն էր թէ ինչո՞ւ շինութեան պիւտճէն նախապէս այս ժողովին չէ բերուած:

Գ. ԱՍԼԱՆԵԱՆ ԷՖ. (Շարունակելով). — Ահա այնպիսի պայմաններու մէջ շինեցինք, ոչ աւելի ոչ պակաս: Իսկ պիւտճէի խնդիր ոչ չկայ, Պատրիարքարանի պիւտճէի մէջ չէ Բանկալթիի դրամը, այլ արտակարգ եկամուտ մը, նախ Բերայի կալուածող շինութեան համար գումար մը տրամադրեցինք անկէ, յետոյ գումար մը աւելցաւ անկէ, Պատրիարքարանի մատակարարութեան դուրս էր՝ մենք ալ յատկացուցինք զայն Ազգ. Պատրիարքա-

կատարուած լմնցած գործողութեան վրայ, որուն մասին ժողովս կ'ուզէ ցաւ կը յայտնէ, կ'ուզէ պարտաւանագ քուէ կուտայ, կ'ուզէ կը ծափահարէ ատիկա ձեր գիտնալիք բանն է: Բայց խնդիրը լմնցած է, և ատոր վրայ մեր համարատուութեան ասին միայն պէտք է վիճիլ: Այժմ արդէն պակաս մնացած ծախքերուն ալ հատուցման պատուէրները տրուած են. գուգադիպութեամբ՝ նախորդ Վարչութեան Ատենապետը հոս ներկայ գտնուելով լիութի բացատրութիւն տուաւ ատոր պատճառներու մասին: Մենք սակայն համամիտ չենք անոր և պիտո՞՞նք հետ կապ ունենալը կ'ընդունինք. պիտո՞՞նք մէջ դրած ենք արդէն, պիտի գայ ժողովիս: Այժմ փակենք խնդիրը, երբ պիտո՞՞նք գայ, այն ատեն այդ մանրամասնութեանց մասին կը վիճինք:

Ա. ՀԱՆԱԶԵԱՆ ԷՖ. — Ասլանեան էֆ. յայտնեց թէ Բանկայթիի գերեզմանատան 6000 ոսկին առած են, այսինքն Բերայի թաղին սեփական գումար մը: Ես իբրեւ Բերայի երեսփոխան, կը պահանջեմ որ այդ գումարը ետ տրուի թաղին, 15000 ոսկին այդ թաղին սեփականութիւնն է. ես արդէն ժամանակին բողոքած եմ, իրեն իրաւունքն է այդ 6000 ոսկին գործածելը:

Տ. ՀՄԱՅԵԱՆ ԵՊ. — Եղածը եղած է. բայց եթէ այն նորաշէն Պատրիարքարանին տեղ հինը մնար, աւելի գոհ պիտի մնայինք. մինչև որ ազգին վիճակը որոշուէր: 15000ը Բերայի համար ձրի չնստեցաւ, մեծ ջանադրութիւն ցուցուեցաւ ու մեր մեռելներու ոսկորներով կազմուեցաւ այդ գումարը: Բերայի թաղը արդէն զրկուած և նեղ վիճակ մը ունի, իր դպրոցները չի կրնար կառավարել, պէտք է որ առաջ խանութները շինուին որ եկամուտ բերեն: 15000ը Բերայի ձեռքէն առին՝ ըսելով որ գետինն ազգին է. բայց եթէ գետինն ու դրամը ազգինն է, նախորդ Վարչութիւնը պարտաւոր էր այս ժողովին բերել խնդիրը: 3000 ոսկին Կեդրոնականի շինութեան յատկացուցին. ճիշտ է, նոր սերունդը հոս կը փճանայ. երանի թէ գոնէ ատիկա գործադրէին ամենէն առաջ, մինչդեռ փութալանութիւնը ունեցան անոր դրամն ալ

իւրացնել: Կ'աղաչեմ նոր Վարչութիւնէն որ այդ գումարը ուտով Բերայի սնանկին վերագարձնէ, որպէս զի անով օր առաջ խանութները շինուին և դպրոցները եկամուտ ունենան:

Վ. ԹԵՔԵԱՆ ԷՖ. — Նախորդ Վարչութիւնը շատ քննադատուեցաւ. իսկ այժմ երբ բոլոր ժողովը համամիտ է կէտի մը վրայ, ես պարագայ մը կ'ուզեմ դիտել տալ թէ՛ դրամը ծախսուած բայց գործ մը տեսնուած է: Արդէն եկող գացող Վարչութեանց և խնդիրներու վրայ ժողովս մինչև ցարդ իր հակակշիռ իրաւունքը չէ գործադրած, և այժմ ուրիշ ներքին թերութիւններու համար գետնէ գետին կը դարնէ:

Այս յառաջարկն էսք, շինութեան գալով. պիտո՞՞նք մէջ անցընելու պահանջը օրինապէս ճիշտ է: Ժողովը իրաւունք ունէր նախահաշիւը տեսնելու. ո՛չ միայն այդ, այլև իրաւունք ունէր հետապնդելու թէ այդ նախահաշիւը և նախագիծը լաւ կը գործադրուի՞ թէ ո՛չ: Գործին շարունակութեան ընթացքին մենք ո՛րը առարկեց այդ բանին համար: Տարին լրացաւ, պիտո՞՞նք գործադրուեցաւ եւ յետոյ հոս կը բերուի: Վարչութիւնը փորձառու է և միշտ պատրաստ է հաշիւ տալու. ուստի ես այս գործը քննադատութեան արժանի չեմ նկատեր, այլ շնորհաւորութեան: Աւելի պակաս կարելի չէր ծախսել և այդպիսի կոկիկ չէնք մը չինել, Պատրիարքնիս հոն պիտի բնակի՝ հիւրեր պիտի ընդունի, Շէնքը կը գտնուի այնպիսի շրջանի մէջ որ աւելի բազմաձայն է: Եթէ օրինական զանցառութիւնը չենք արդարացներ, բայց գոնէ չէնք չինուեր է, շնորհաւորութեան արժանի նկատենք: Ես իմ մասին գոհ եմ. իսկ թէ պէտք էր Պատրիարքարանի շինութեան հետ Կեդրոնական վարժարանի շինութիւնն ալ կատարել. լաւ, բայց կրնա՞ր ըլլալ թէ ոչ, 3000 ոսկին չէր բաւեր, ինչպէս որ պատրիարքարանի շինութեան համար նախապէս որոշուած գումարը չբաւեց: Եթէ Ասլանեան էֆ. իր նախաձեռնութեամբ յանդգնութիւնը չունենար գործը շարունակելու, պատրիարքարանի շինութիւնն ալ Կեդրոնականի պէս պիտի մնար: Ան չի խուսափիր պատասխանա-

տուութիւնը վերցնել և զինքը ընտրող ժողովին առջև հաշիւ տալ:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Ներկայ Վարչութիւնը շատ աւելի լաւ կ'ընէր՝ որ հարցումին պատասխանը քիչ մըն ալ ուշ բերէր. որպէս զի չէնքին ներկն ալ լմնար, քալօրիֆէրն ալ զրուէր և յետոյ բերէր: Նոր Վարչութիւնը սովոր է միշտ իր պատասխաններուն մէջ իր նախորդին դէմ քննադատական ոճով խօսիլ, երկու անգամն ալ այդպէս եղաւ: Այս տեսակէտով որչափ որ օրինական է իր ընթացքը, ուրիշ տեսակէտով քննադատելի է: Այս ժողովին մէջ ըսուեցաւ թէ Պատրիարքարանի պաշտօնեաներուն նուէրներ կը տրուին, այդ պահուն ալ իր նախորդը քննադատեց...

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. (Ընդմիջելով). — Խնդրէն կը չեղիք:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. (Շարունակելով). — Նոր Վարչութիւնը չսաւ թէ՛ երբ իրենք ընտրուեցան ինչո՞ւ չբերին հոս խնդիրը եւ չըսին թէ 3000 ու պատրիարքարանը չի չինուիր, երբ հոս ինքը նախորդ Վարչութիւնը կը քննադատէ, կը մոռնայ որ իր մէջը նախորդ Վարչութիւնէն ալ անդամներ կան. որոնք վերընտրուած են:

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. (Ընդմիջելով). — Կը չեղինք կոր, Նախանեան էֆ.:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. (Շարունակելով). — Ըսել կ'ուզեմ թէ ան իր նախորդը կը քննադատէ, սակայն իր մէջ նախորդ Վարչութեան անդամներ կան: Հետեւաբար, ո՛չ նախորդը քննադատութենէն ազատ կրնայ մնալ և ո՛չ ալ ներկան արդար կրնայ համարուիլ: Գործը կատարուած վերջացած է: Երեք բան կը մնայ ընելիք, կամ վաւերացնել եղած գործը, կամ տուժել տալ նախորդ Վարչութեան անդամներուն և կամ պարտաւանագ քուէով վերջացնել խնդիրը: Աստուծոյ ոչ մէկը կրնանք ընել: Ես կ'առաջարկեմ ընդունիլ կատարուած իրողութիւնը և վաւերացնել:

Ե. ՊԵՏԱՃԵԱՆ ԷՖ. — Միտքաւոր Հայկազն էֆ. նուազուրդ եղած է ըսաւ: Նուազուրդ ըսելով ես կը հասկնամ այն՝ որ չէնք չինուելէ առաջ հանրային յայտարարութիւն մը կ'ըլլայ և նուազագոյն գումարով յանձնառու եղողը կը ստանձնէ շինութիւնը: 4—5 փայտերու գնումին համար նուազուրդ ընել եւ 3—4000 ոսկի ծախքին համար չընելը ինչո՞ւ պէս որակել:

Մ. ՀԱՅԱՍՏ ԷՖ. — Իմ աչքիս առջև եղան նուազուրդները, նոյնիսկ 20 դրժ ի ապրանքի համար:

Ա. ՍԷՊԱՅԷԱՆ ԷՖ. — Բոլոր ատենախօսները նախորդ Վարչութիւնը քննադատեցին թէ ինչո՞ւ նախահաշիւը չբերաւ: Բայց չքննադատեցինք ներկայ Վարչութիւնը թէ՛ յաւելուածական 1400 ոսկին ծախսելէ առաջ ինչո՞ւ չենթարկեց ժողովիս հաւանութեան:

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրը պէտք եղածին չափ լուսարարուած է, այժմ պիտի կարդացուին բանաձեւերը:

(Ատենադպիր էֆէնտի կարդաց հետեւեալ երեք բանաձեւերը). —

Պատրիարքարանի վերաշինութեան առթիւ ժողովս լսելով ներկայ Վարչութեան ինչպէս նաև նախորդ Վարչութեան ատենապետին բացատրութիւնները, իր գոհունակութիւնը կը յայտնէ որ նախորդ Վարչութիւնը սկսած է այդ կարեւոր գործը և արդի վարչութիւնը գլուխ հանած է զայն:

Ե. ՍՐՄԱՔԷՇԵԱՆԵԱՆ

Ժողովս Պատրիարքարանի վերաշինութեան մասին ցաւ կը յայտնէ որ՝ նախորդ Վարչութիւնը առանց օրէնսդիր մարմնոյն քուէն առնելու ձեռնարկած է շինութեան:

Ե. ՊԵՏԱՃԵԱՆ

Ազգ. Պատրիարքարանի վերաշինութեան խնդրոյ մասին լսելով կատարուած քննադատութիւնները ինչպէս նաեւ նախորդ վարչութեան Ատենայպետ Գ. Ասլանեան էֆ. ի բացատրութիւնները, Ազգ. Ժողովը կը հաւանի այն եզերակացութեան թէ վերաշինութեան յատկացուած գումարին իբրեւ պիւտճէի մասը Ազգային Ժողովին բովէն անցած չլլաւ իւրողութիւն մ'է, այսուհանդերձ կատարուած իրողութեան առջեւ զայն կ'ընդունի և կանցնի օրակարգի յաջորդ խնդրին:

Վ. ԹԵՔԷՆԱՆ

Կ. ԽԱԶՍՏՈՒՐԵԱՆ

Ա. ԱԼՊՅԱՆՆԱՆ

(Ժողովը մեծամասնութեամբ ընդունեց վերջին բանաձեւը):

Բ. ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրակարգի միւս խնդիրն է Կրօնական Ժողովին ընտրութիւնը: Սրբազան Պատրիարքին գրուած է արդէն որ Համագումար Ժողով հրաւիրէ և եռապատիկ ցանկ մը պատրաստել տայ: Տակաւին պատասխան ստացուած չէ:

Տ. ՀՄԱՅԵԱՆ ԵՊ. — Անշուշտ Կրօնական Ժողովը իր պաշտօնը այլեւս չի կրնար շարունակել, քանի որ ըստ օրինի երկու տարին անգամ մը ընտրութիւն պիտի կատարուի: Սակայն ներկայ փափուկ պարագաներու մէջ երբ ան Քաղաքական Ժողովին հետ ընտելացած է. թող ժամանակ մըն ալ շարունակէ իր պաշտօնը, մինչեւ որ Հայկական Հարցը բանի մը յանգի: Ուրիշ անգամներ պատահած են այդպիսի պարագաներ, որ Վարչութիւնները մինչեւ 10 տարի իսկ շարունակեալ են պաշտօնավարել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախատեսմանադրական չըլլանք մէջ այդպէս կրնար ըլլար, այժմ չըլլար: Ժողովները պէտք է իրենց ատենին փոխուին, այդպէս կը պահանջէ օրէնքը, զոր ոտնակոխ չենք կրնար ընել:

Ա. ԱԼՊՅԱՆՆԱՆ ԷՖ. — Անձերը չեն որ կը վարեն գործը, այլ Ժողովները հաւաքաբար: Կրօնական Ժողովը սահմանադրապէս այլեւս գոյութեան իրաւունք չունի: Նոյնիսկ անոր հրաժարական բերելը սխալ մըն էր. պէտք էր միայն նախագահ սրբազանը պաշտօնապէս ծանուցանէր մեզ թէ՛ անոնց չըլլանք աւարտած է և առաջարկէր նոր ընտրութեան պատրաստութիւնները տեսնել:

ԿՈՊԵՌՆԻԿ ԷՖ. — Սահմանադրութիւնը կը տրամադրէ նոյնիսկ որ երկու տարի պաշտօնավարելէ ետք, բոլորովին տարբեր անդամներ ընտրուին: Հետեւաբար երկամեայ չըլլանք վերջ պաշտօնի շարունակութիւնը կարելի չէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պատրիարք Սրբազանին գրուած է արդէն, կը յուսանք թէ շուտով պատասխանը կուգայ:

Տ. ՀՄԱՅԵԱՆ ԵՊ. — Անձի խնդիրը մեծ խնդիր չէ կ'ըսուի: Ընդհակառակն, ամենամեծ խնդիրն է: Շատ բաներ կան ընելիք, Քաղաքական Ժողովին հետ ան շատ գործեր սկսած է, և նորը կարելի է չհամակերպի և գործը դանդաղի կամ լճառուի: Օրէնքները իրենց բացառութիւնները ունին. եկէք այս անգամ ալ, ծանր տագնապը նկատի առնելով՝ բացառութիւն մը ընենք:

ԶԱՅՆԵՐ. — Քուէի դրէք:

ՈՒՐԻՇ ԶԱՅՆԵՐ. — Օրէնքը քուէի չի դրուիր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բացառութիւն մըն է, քուէի կը դնենք թէ ընենք այդ բացառութիւնը:

Կ. ԽԱԶՍՏՈՒՐԵԱՆ ԷՖ. — Նոր Կրօնական Ժողովը կրնայ շարունակել իր նախորդին գործը, չէ որ, ինչպէս նախորդը, նոյնպէս և նորը այս Ժողովէն կը բղխին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն երկրորդ անգամ կը գրենք և յառաջիկայ նիստին կը կատարենք ընտրութիւնը:

Նիստը փակուեցաւ ժամը 5,30ին:

ԱՅԵՆԱՊԱՐԻ ԱՅԵՆԱՊԵՏ
Հ. ԱՐԱՄԵԱՆՑ ՏՐ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ

(Գ. ՎԻՃԱԿ)

Գում-գաբու, Գում գաբու ի Գում

69. Դաւիթ էֆ. Տէր-Մովսէսեան
70. Համբարձում » Պոյաճեան
71. Սարգիս » Սուրն
72.

Կէսիկ-փաշա

73. Հմայեակ էֆ. Արամեանց
74. Յարութիւն » Ճանկիւլեան
75. Յակոբ » Սեփիւսեան
76. Յակոբ » Նշանեան
77. Ներսէս » Զաքարեան

Սամաթիա Ա. Գէորգ

78. Գրիգոր էֆ. Զօհրապ
79. Լեւոն » Սաթմեան
80. Հակ » Խօճասարեան
81. Պարգեւ » Փափագեան
82. Լեւոն » Սեդրոսեան
83. Ռուբէն » Փափագեան
84.

(Ե. ՎԻՃԱԿ)

Գում կլուցնուկ — Բնասիէ

85. Երուանդ էֆ. Խորասան
86. Լեւոն » Տէմիճիպաշեան
87. Ռուբէն » Զարդարեան
88. Ոսկան » Մարտիկ ան
89. Կոպիւնիկ » Խաչատուրեան

Թօփ-գաբու

90. Դաւաթիա-Պէյֆօղ Թտեան
91. Երուանդ էֆ. Նաւր-գաբու
92. Նշան էֆ. Գալլաճեան
93. Տիգրան » Մանուէլեան

Սամաթիա Ալթընքէմեր

94. Սկիւսար Ա. Խաչ
95. Բարսեղ էֆ. Աւետիսեան
96. Գարեգին » Տէմիճիպաշեան
97. Յարութիւն » Շահրիկեան
98. Վարդգէս » Սէրէնկիւլեան
99. Յակոբ » Մինասեան

Բումէլի-հիսար. Պոյաճը-գիւղ. Եւնի-գիւղ
100 Արթուր էֆ. Տէր-Յակոբեան

ԴԱՆԱՌԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

(Ա. ՎԻՃԱԿ)

101. Վահան էֆ. Եգիպտոս
102. Յակոբ էֆ. Եգիպտոս
103. Տօթ. Փաշաեան էֆ. Կարիւն
104. Սողոմոն էֆ. Տէր-Ազարեան
105 Կիւրիւն-Մանգլըզ

Մուտ

106. Գեղամ էֆ. Տէր Կարապետեան
2մեկածագ—Զարաւմեակ
107. Տրապիզոն
108. Օննիկ էֆ. Զիֆթէ-Սարաֆ
(Բ. ՎԻՃԱԿ)
Աղբամար
109. Բալու
110. Մելքոն էֆ. Կիւրճեան
111. Աւետիս էֆ. Եօզլատ
112. Վահան էֆ. Ճինիլիկեան
113. Սարգիս էֆ. Լսանեան
114. Տօթ. Գրիգոր էֆ. Զալէլ
115. Տօթ. Ներսէս էֆ. Պաղտատ
116. Սերովբէ էֆ. Սղերդ
117. Ատովմ էֆ. Երեցեան
118. Արթարի էֆ. Սարաֆեան
119. Սեպուհ էֆ. Խիթիսեան
120. Լեւոն էֆ. Զմիւռնիա
121. Տէվլէթ էֆ. Տաթեան
122. Պանքրուս — Պալքէսիւր
123. Տիգրան էֆ. Երկանեան
124. Վալ
(Գ. ՎԻՃԱԿ)
Աղբամար
125. Օննիկ էֆ. Տէրունեան
126. Արիստակէս էֆ. Գասպարեան
127. Աղէքսանդր էֆ. Փանոսեան
128. Զարեհ էֆ. Խօրասանեան

Պրուսա		Գաղաթիա	
129.	Գասպար էֆ. Նեմցէ Hosoupo	135.	Տր. Խաչիկ էֆ. Պօղոսեան
130.			Գօնեա
	Տիգրանակէրս	136.	Բարթող էֆ. Զօրեան
131.	Տիգրան էֆ. Նազաշեան		Երզնկա
	Տիլրիկ	137.	Գարրիէլ էֆ. Նորատունկեան
132.	Գէորգ էֆ. Մեծատուրեան		Մարաշ - Զէյթուն
	(Ե. Վիճակ)	138.	Սմբատ էֆ. Բիւրատ
	Ամասիա - Մարգուտն		Շապին-Գարահիսար
133.	Տիգրան էֆ. Մարտիկեան	139.	Ժագ էֆ. Սայապալեան
	Բաբերդ		Սեբասիա
34.	Երուանդ էֆ. Սրմաքէշխանլըեան	140.	Տօթ. Նազարէթ էֆ. Տաղաւարեան

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ

Ա. Ատենապետ	Գարրիէլ էֆ. Նորատունկեան	Ա. Ատենադպիր	Հմայեակ էֆ. Արամեանց
Բ. »	Տր. Տաղաւարեան էֆ.	Բ. »	Երուանդ էֆ. Պէյազմեան
Գ. »	Յակոբ էֆ. Պոյաճեան	Գ. »	Աղեքսանդր էֆ. Փանոսեան

Ն Ա Խ Ա Ք Ն Ն Ի Զ Դ Ի Ի Ա Ն Ք

ՋԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Տ. Հմայեակ Արքեպս. Դիմաքսեան
Բ. Արամ էֆ. Հայաճեան
Գ. Արշակ էֆ. Սլոյաճեան

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Յակոբ էֆ. Պոյաճեան
Բ. Լեւոն էֆ. Սեդրոսեան
Գ. Հրանտ էֆ. Ասատուր

ԿԱԼՈՒՍԾՈՑ ԴԻԻԱՆ

Ա. Պենոն էֆ. Տէյրիմէնճեան
Բ. Վահան էսայեան
Գ. Թորգոմ Պոյաճեան

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Եղուարդ էֆ. Շիրինեան
Բ. Խաչիկ Սրվաճեան
Գ. Պարզեւ էֆ. Փափազեան

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Յարութիւն էֆ. Մոստիչեան
Բ. Բարսեղ էֆ. Աւետիսեան
Գ. Նշան էֆ. Գալըպճեան

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Տ. Մաղաքիա Աքեպ. Օրմանեան
Բ. Գարեգին էֆ. Տէմիրճիպաշեան
Գ. Մելքոն էֆ. Կիւրճեան

ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Դաւիթ էֆ. Տէր-Մովսէսեան
Բ. Գէորգ էֆ. Մեծատուրեան
Գ. Հայկ էֆ. Խօճատարեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Բարթող էֆ. Զօրեան
Բ. Վահան էֆ. Թէրէեան
Գ. Ռուբէն էֆ. Զարդարեան

ԵԼԵԻՄՏԻՑ ԵԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Սեփականութիւն Սզգ. Սնտուկին, Ազգ. Ժողովոյ ծախուց յաւկայցեալ
Կը ծախուի յ'Ազգ. Խորհրդարան Ղալաթիոյ